ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 15 >> դեկտեմբերի 2020թ. N ՄՈ/474-2020

ք. Արմավիր

ՎԱՀԵ ԴԱՎԹՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ԵՎ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՉՕԳՏԱԳՈՐԾԱԾ ՕՐԵՐԸ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 156-րդ, 163-րդ, 164-րդ հոդվածներով, 167-րդ հոդվածի 3-րդ մասով և 169-րդ հոդվածի 3-րդ մասով, <<Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշման NI հավելվածի 19-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2019 թվականի նոյեմբերի 28-ի N ՄԿ/199-2019 կարգադրությունը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի խորհրդական Վահե Դավթյանի 2020 թվականի դեկտեմբերի 12-ի դիմումը.

Որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի խորհրդական Վահե Դավթյանին տրամադրել 2018-2019 թվականների աշխատանքային տարվա տեղափոխված արձակուրդի չօգտագործած մասը՝ 17 աշխատանքային օր և 2019-2020 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա արձակուրդի մասը՝ 4 աշխատանքային օր՝ 2020 թվականի դեկտեմբերի 25-ից 2021 թվականի փետրվարի 2-ը ներառյալ՝ 21 աշխատանքային, 6 տոնական և 1 հիշատակի օր տևողությամբ:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի խորհրդական Վահե Դավթյանի 2019-2020 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա արձակուրդի չօգտագործած մասը՝ 20 աշխատանքային օր տևողությամբ տեղափոխել և տրամադրել նույն աշխատանքային տարում, բայց ոչ ուշ քան 18 ամսվա ընթացքում՝ սկսած այն աշխատանքային տարվա վերջից, որի համար մասնակի է հատկացվել ամենամյա արձակուրդը:
3. Վահե Դավթյանին աշխատանքի մեջ համարել 2021 թվականի փետրվարի 3-ից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ **Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

Недействительная подпись

VERIFIED OCSP 15.12.2020 12:40:48 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230